ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2015 թվականի թիվ 54 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշման պահանջներով

որոշում եմ

1. Հաստատել՝

1) <<ՀՀ Տավուշի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլան>>-ը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Սահմանամերձ գոտուց ըստ տարիքային խմբերի տարահանված բնակչության հաշվարկը՝ համաձայն հավելված 2-ի,

3) Տարահանված բնակչության տեղաբաշխման հաշվարկը՝ ըստ ընդունման բնակավայրերի՝ համաձայն հավելված 3-ի,

4) Տուժած բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 4-ի,

5) Տուժած բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկը ըստ տարիքային խմբերի՝ համաձայն հավելված 5-ի,

6) Տուժած բնակչության առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 6-ի,

7) Տուժած բնակչությանը տրվող հագուստի, ներքնազգեստի և կոշիկի ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 7-ի,

8) Տուժած բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների հաշվարկը՝ համաձայն հավելված 8-ի,

9) ՀՀ Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն հավելված 9-ի,

10) Բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն հավելված 10-ի,

11) Տավուշի մարզի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն հավելված 11-ի,

12) ՀՀ Տավուշի մարզի տարահանված բնակչության սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 12-ի,

13) Տավուշի մարզի ընդունող բնակավայրերի և ընդունման հավաքակայանների ցուցակը՝ համաձայն հավելված 13-ի,

14) Տավուշի մարզի բնակավայրերի ժամանակավոր տեղաբաշխման կետերի ցուցակը՝ համաձայն հավելված 14-ի,

15) ՀՀ Տավուշի մարզի երկարատև բնակության կետերի ցուցակը՝ համաձայն հավելված 15-ի,

16) Սահմանամերձ 10 կմ-ց գոտուց տարահանված բնակչության երկարատև կետերի բնակչության ամրագրման հաշվարկը՝ համաձայն հավելված 16-ի:

2. Մարզային փրկարարական վարչության պետին՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը ճշգրտել պլանը հունվարի 1-ի դրությամբ:

3. Սույն որոշման կատարման պատասխանատուներ նշանակել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանին և ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Վ. Հովսեփյանին:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

24 մարտ2015թ.
ք.Իջևան